

**FOR IMMEDIATE RELEASE**

Date: 16 March 2016

Կոնտակտային անձ՝ Աննա Ուիլսոն

Հեռ.՝ +44 20 7338 8131

Էլ. հասցե՝ [anna.wilson@ebrd.com](mailto:anna.wilson@ebrd.com)

## ՎՋԵԲ-ը և ԵՄ-ն մեծացնում են Արևելյան գործընկերության երկրներում ՓՄՁ-ների ու կլին ձեռներեցների աջակցման ծավալները

*Ծրագրերի նպատակն է ապահովել ԱԳ վեց երկրներում ՓՄՁ-ների համար  
ֆինանսավորման ու խորհրդատվության հասանելիության*

-----

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) և Եվրոպական Միությունն (ԵՄ) ընդլայնում են Արևելյան գործընկերության երկրներում փոքր ու միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) ու կլին ձեռներեցներին աջակցման ծրագրերը:

Աջակցման լրամշակված ծրագրերն իրականացվելու են Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: ՓՄՁ հատվածին տրամադրվող աջակցությունը ՎՋԵԲ-ի՝ 2014թ. հուլիսին մեկնարկած [Փոքր բիզնեսի նախաձեռնության](#) բաղադրիչ մասը և բանկի ռազմավարական առաջնահերթություններից մեկն է:

### **Առևտրի խթանում և մրցունակության բարձրացում**

Եվրոպական Միությունը հատկացրել է 8 միլիոն եվրո վերոնշյալ վեց երկրներում ՓՄՁ-ներին տրամադրվող բիզնես խորհրդատվության ծավալներն ընդլայնելու համար: Բազմաթիվ ծրագրի շրջանակներում փոքր ձեռնարկությունները կունենան հնարավորություն խորհրդատվություն ստանալու ռազմավարության, մերքեթինգի, ՏՀՏ, էներգախնայողության և մի շարք այլ բնագավառների տեղի ու միջազգային խորհրդատուներից:

Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում իրականացվող խորհրդատվական ծրագրերի քառասուն տոկոսի նպատակն է օգնել փոքր ձեռնարկություններին վեր հանել և օգտագործել Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) շրջանակներում առկա նոր հնարավորությունները: Բիզնես խորհրդատվությունը կխթանի ՓՄՁ-ների մրցունակությունը, կոյուրացնի ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու գործընթացը, կօգնի օգտվել առևտրային նոր հեռանկարներից և գործել սննդի անվտանգության, տեխնիկական ու որակական նոր չափանիշներին և բնապահպանական չափորոշիչներին համապատասխան:

Ծրագրի երկրորդ փուլը նախատեսում է ներգրավել մոտավորապես 550 ՓՄՁ շահառու՝ ստեղծելով 2500 նոր աշխատատեղ: Սակայն ծրագրի ազդեցությունը չի սահմանափակվում վերոնշյալ 550 շահառուներով. հանրային իրազեկման աշխատանքներն ու շուկայի զարգացումը դրական կազդեն հանրության ավելի լայն շերտերի վրա:

Չորացրած մրգեր ու հատապտուղներ արտադրող վրացական «Geo-Flower» ՄՊԸ-ն ծրագրերի շրջանակներում հաջողության հասած ընկերություններից մեկն է: Ծրագրի առաջին փուլում վրացական ձեռնարկությունը ներդրեց միջազգային ճանաչում ունեցող որակի կառավարման ու անվտանգության հավաստագրման մեխանիզմներ, ինչի շնորհիվ ձեռք բերեց արտահանման նոր գործընկերներ Եվրոպական Միությունում՝ մեկ տարվա ընթացքում արտահանման ծավալները մեծացնելով 40%-ով, իսկ շրջանառությունը՝ 250%-ով:

### **Կանայք և զարգացում**

Եվրոպական Միությունը հատկացրել է 5.035 միլիոն եվրո Արևելյան գործընկերության երկրներում ՎՋԵԲ-ի «Գործարար կանայք» ծրագրի իրականացմանը: Ծրագրի շրջանակներում կին ղեկավար ունեցող ՓՄՁ-ներին տալիս են ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու հնարավորություններ ու բիզնես խորհրդատվություն վարկային գծերի միջոցով, կին ձեռներեցների հետ աշխատող տեղական գործընկեր բանկերին տրամադրում են աջակցություն ռիսկերի կառավարման ու տեխնիկական հարցերի լուծման համար, ինչպես նաև կազմակերպում են բիզնես խորհրդատվություն, ձեռներեցության հմտությունների դասընթացներ և ուղղորդում կին ձեռներեցների համար: Եվրամիության հատկացրած գումարն ուղղվելու է ծրագրի ռիսկերի կառավարման ու տեխնիկական աջակցության բաղադրիչի իրականացմանը, որ համաֆինանսավորում են Շվեդիայի կառավարությունն ու Վադ անցումային երկրների հիմնադրամը:

«Այս վեց երկրում ՓՄՁ-ների տեսակարար կշիռը կազմում է ձեռնարկությունների 95%, սակայն ՀՆԱ-ում դրանց մասը միջինում չի գերազանցում 30%», - ասում է ՎՋԵԲ-ի ՓՄՁ ֆինանսավորման ու զարգացման գծով գործադիր տնօրեն Կլաուդիո Վիեցցոլին, - «Մեր կարծիքով կենսունակ ՓՄՁ հասվածը նպաստում է տնտեսության արդյունավետ գործունեությանը, և ճիշտ աջակցություն տրամադրելու դեպքում ձեռներեցության ուժեղ ոգին, որ կա այս տարածաշրջանում, կարող է բացահայտել ողջ ներուժը: Եվ ես ուրախ եմ, որ մենք շարունակում ենք Եվրամիության հետ մեր համագործակցությունն այս նախաձեռնությունը կյանքի կոչելու համար»:

ԵՄ-ն համագործակցում է ՎՋԵԲ-ի հետ նաև ԽՀԱԱԳ շրջանակներում Կրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, որոնք ստորագրել են

Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագիրը: Համագործակցությունը ավելի մեծաձավալ նախագծի՝ ԽՀԱԱԳ ՓՄՁ-ների աջակցման ծրագրի մասն է կազմում: Վերջինս նոր ներդրումների հեռանկարներ է բացում այս երեք երկրների ՓՄՁ-ների համար, իսկ ներդրումները մեծամասամբ միջազգային ֆինանսական կառույցների՝ մասնավորապես ՎՋԵԲ-ի ու Եվրոպական ներդրումային բանկի, տրամադրած վարկերից են արվում:

Եվրոպական Միությունը կարևորում է մասնավոր հատվածին, հատկապես փոքր ձեռնարկություններին աջակցումը՝ այդպիսով խթանելով տնտեսական աճը և աշխատատեղերի ստեղծումը Արևելյան գործընկերության երկրներում: ԵՄ աջակցությունն ուղղվում է բիզնես խորհրդատվության, ֆինանսական ռեսուրսների ներգրավման կամ ռազմավարական երկխոսության ոլորտներին:

Գործընկեր ֆինանսական կառույցների միջոցով ՎՋԵԲ-ն արդեն ներդրել է 8.84 միլիարդ եվրո Արևելյան գործընկերության երկրներում փոքր ու միջին ձեռնարկությունների ու կին ձեռներեցների աջակցման, էներգախնայողության առաջխաղացման և այլ առաջնահերթ բնագավառների ծրագրերի մեջ: Եվրամիության, Շվեդիայի և այլ դոնոր կառույցների համաֆինանսավորման շնորհիվ՝ ՎՋԵԲ-ը տրամադրել է խորհրդատվություն տարածաշրջանի ավելի քան 4.000 ՓՄՁ-ների:

###

*ՎՋԵԲ-ը միջազգային զարգացման բանկ է, որի նպատակն է ապահովել շուկայական տնտեսությունների առաջընթացը և խթանել մասնավոր հատվածի ու ձեռներեցության զարգացումն ավելի քան [30 երկրում](#)՝ Մարոկկոյից մինչև Մոնգոլիա, Եգիպտոսից մինչև Էստոնիա: ՎՋԵԲ-ը պատկանում է 65 պետության, Եվրոպական Միությանն ու Եվրոպական ներդրումային բանկին: Հետևե՛ք մեզ մեր պաշտոնական [կայքում](#) և սոցիալական մեդիայի էջերում՝ [Facebook](#), [Instagram](#), [Twitter](#) և [YouTube](#):*

*Եվրոպական Միության կազմում է 28 անդամ երկիր, որ աստիճանաբար միավորում են իրենց գիտական ներուժը, ռեսուրսներն ու ճակատագրերը: Ընդլայնման 60 տարվա ընթացքում ԵՄ անդամ երկրները ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման գոտի՝ զուգահեռ պահպանելով մշակութային առանձնահատկությունները, հանդուրժողականությունն ու հիմնարար ազատությունները: Եվրոպական Միությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները ԵՄ սահմաններից դուրս երկրների ու ժողովուրդների հետ:*